«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

---

# ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության որակավորման հանձնաժողովի նիստի 2025թ. դեկտեմբերի 24-ի նիստի թիվ 23/25 արձանագրությունից

. . .

*Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության և անցկացված քննարկումների հիման վրա և առաջնորդվելով Պալատի խորհրդի 2021 թ. դեկտեմբերի 2-ին ընդունված թիվ 70-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության աուդիտոր և փորձագետ հաշվապահ անդամների շարունակական մասնագիտական զարգացման կարգով՝ Հանձնաժողովը քվեարկությամբ միաձայն (կողմ՝ 9, դեմ՝ չկա, ձեռնպահ՝ չկա) որոշեց.*

. . .

*1.22. Հավանություն տալ Փըրֆեքթ Աուդիտ ՍՊԸ-ի կողմի իր գրասենյակում 2026թ. ընթացքում կազմակերպվող ստորև նշված դասընթացները որպես ՇՄԶ համարելուն՝ որպես ՇՄԶ կարգի 3.1.2. կետով նախատեսված միջոցառումներ.*

| *Դասընթացի անվանում* | *Դասընթա-ցավար* | *Տևողություն* |
|---|---|---|
| ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ (փոփոխություններ), ՖՀՄՍ 7 Ֆինանսական գործիքներ բացահայտումներ (փոփոխություններ) | Աղավնի Բաբայան | 3 ժամ |
| ISQM 1,2 Որակի կառավարման միջազգային ստանդարտ, Աուդիտորական կազմակերպության որակի կառավարման համակարգ, Առաջադրանքի որակի վերանայում | | 3 ժամ |
| ԱՄՍ 250 ՖՀ աուդիտի ընթացքում օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների ուսումնասիրումը | | 3 ժամ |
| ԱՄՍ 315 Էական խեղաթյուրումների ռիսկերի հայտնաբերումն ու գնահատումը՝ կազմակերպության և դրա միջավայրի վերաբերող պատկերացումների միջոց | | 3 ժամ |
| ԱՄՍ 330 Աուդիտորի գործողությունները գնահատված ռիսկերի առնչությամբ | | 3 ժամ |

. . .

1.24. Սահմանել, որ որպես ՇՄՀ համարելուն հավանություն տալու վերաբերյալ կայացված վերը բերված թիվ 1.2., 1.18, 1.19, 1.20 և 1.22 որոշումները վավեր են՝ պայմանով, որ դասընթացները փաստացի անցկացվեն այն անձանց կողմից, ում CV-ն որպես տվյալ միջոցառման դասընթացավարի, ներկայացվել է հանձնաժողովին՝ հավանություն ստանալու նպատակով, ինչպես նաև դասընթացների անցկացման կոնկրետ ժամանակացույցի և վայրի ու դրանց հետագա փոփոխությունների (եթե այդպիսիք լինեն) մասին նախապես հայտնեն Հանձնաժողովին:

. . .

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Հարությունյան

Քարտուղար՝ Գ. Ափոյան